

թողուն, եւ այնպիսի հրամայական ձայնիւ՝ որու պատասխան կարելի չէր:

Յոն՝ այդ սարաւանդին տափին վրայ Գուրգէն իւր հառաչանաց ձայները ծովուն մռնչմանց ձայնին մէջ կը խղդեր, ձիւնախառն քամին իւր սեւ եւ երկայն մազերուն հետ կը խաղար եւ որովհետեւ այն բաւական չէր՝ ուստի ինք շարունակ ձիւն կ'ածեր գլխուն. հայուն առակին վրայ կը ճշգրտեր եւ կը խորհրդածեր.

«Այ՛ս է եղեր ուրեմն իմ ութ տարուան արեանց եւ քրտանց նպատակս, ինձ որ ամէն բան կը դիւրանար, վասնզի Յեղիէի երջանիկ օրերու յուսով կ'ապրէի եւ նոր կեանքը կարծէի թէ աս գիշեր պիտի՛ սկսի ինձ համար. այո՛, կը սկսի նոր կեանք կեանք դոն հառաչանաց եւ տխրութեանց, դրախտ կ'երազէի, երբ սա դահլիճէն ներս մտայ, եւ դժոխք իւր բոլոր տանջանքներով ու բոցերով զիս իմ սիրտս կը շրջապատէն... Բայց իմ նամակներս ամէնքը հասեր են Յեղիէին եւ վերջինը... ահա այդ մասին է բոլոր դաւը... փոխեր են իմ նամակս, փոխեր են մէջի գրութիւնը, ո՛յ գիտէ ի՞նչ գրուցել տուեր են ինձ... ո՛հ Արծրունիք, անիծեաւ դուք, ձեր սերունդը, Մերուժաններու ծնունդք... ի՞նչ անյագուրդ փափագ տիրելու եւ մեծնալու... Բայց միթէ՞ ես Արծրունի չեմ, տոհմը, սերունդը ի՞նչ ընե... Բայց ես ակսպեւ անգո՞րծ պետք է մնամ, ո՛հ, ո՛չ երբեք. պէ՛տք է, այո, պետք է վրեժխնդրութիւն, եւ այդ վրեժխնդրութիւնը պետք է որ լինի սոսկալի, գազանային, արիւնռուշտ, այնպէս որ բոլոր Վասպուրական ի հիմանց սասանի, բերդերը կործանին, քաղաքները հրդեհին, գիւղերն աւերին, եւ ամէն անցնող ըսէ. ահա՛ այդպէս են Արծրունիք, միշտ առաջինք բանդելու եւ կործանելու համար եւ իրենց անզգամութեան համար. երբ մէկը դաւաճանութիւն, խարդախութիւն, բանսարկութիւն կը գործածն, միւսը հուր, սուր, թոյն եւ մատնութիւն ի գործ դնելէ չի խորշիր... բայց ի՞նչ կ'ըսեմ ես, ո՛վ աստուած իմ, ա՛ն իմ սրտես այդ ցաւը, հանե՛ ինձմէ այդ ատելութեան եւ վրեժխնդրութեան հոգին, ես որ մինչեւ այսօր անզգամութենէ զգուցայ հիմա երբ բախտը եւ մարդկանց անիրաւութիւնը կը յափշտակէ ինձմէ ամէն երջանկութիւն, ամէն յոյս